Կալուածների 1889 Թ. հարկ	19	60
Տէր Վահան Վաչէեանցին ճանապարհածախք . .	20	
Յատկացրած է դրամագլխի հաշուին	25	
Գումար	2534	23

ՀԱՇԻՒ ԴՐԱՄԱԳԼԽԻ

Եկեղեցական—ծխական երկդասեան երկսեռ ուսումնարանաց Հայոց Նոր—Բայեազիդ քաղաքի վասն $18^{89}/_{90}$ ուսումնական տար.

Ուսումնարանապատկան դրամագլխի գումարն է երկու հազար ինն հարիւր քառասուն ռուբլի (2940)։

Սրանից վերկալած է տղայոց Ս. Մեսրովբեան ուսումնարանի շինութեան վրայ ծախսելու երեք հարիւր եօթանասուն և եօթ ր. (377ր.)

Այս գումարը գրուած է մուտք ի 30 Օգոստոսի 1888 Թուի № 78.

Անցեալ $188^{8}/_{9}$ ուսում. տար. ընթացքում դարձեալ վերկալած և ծախսած ուսումնարանի վրայ երեք հարիւր ութսուն և ութ ր. (388 ր.)

Այս գումարը գրուած է մուտք ի 20 Յուլիսի 1889 Թուի № 54.

Ներկայ $18^{89}/_{90}$ Թւի աւելացած մուտքից յատկացրած է դրամագլխի հաշուին պահելու համար քսան և հինգ ռուբլի (25 ր.)

Դրամագլխի մնացած գումարը երկու հազար երկու հարիւր ռուբլի (2200 ր.) տրուած է տոկոսով մուրհակագրերով զանազան անձինքների, բացի մէկ հարիւր եօթանասուն և հինգ ռուբլուց (175 ր.) որը պահվում է տեղիս արքունի գանձարանի խնայողական կասսայում։

Ընդ իսկականին ուղիղ է ստորագրել են

Նախագահ հոգաբարձութեան Եղիազար քահանայ Տէր Միքայէլեանց
Անդամք հոգաբարձութեան Կարապետ Ջիրուխչեանց
Ս. Բատիկ
Զ. Ադամեանց

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԳԻՍ

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 6 Յունիսի ընդ համա–

բաւ 224, որով հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական—ծխական միդասեան տղայոց ուսումնարանի Հայոց Ախալքալաք գեղջ Գօրւոյ գաւառի բարեկրօն Յովհաննէս աւագ քահանայն Տէր Գալստեան, յարգելի երեցփոխանն եկեղեցւոյ տեղւոյն և պատուելի Աղէքսանդրն Յովսէփեան Դանդուրեանց, իսկ անձնափոխանորդ վերջնոյս՝ պ. Մովսէսն Գէորգեան Քուշոյեանց:

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի Նոյն թիւ և ի Նոյն համար, որով հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական—ծխական միդասեան տղայոց ուսումնարանի Ս. Գէորգ եկեղեցւոյ Հայոց Տփխիսոյ բարեկրօն Աշոտ քահանայն Թեմուրազեանց յարգելի երեցփոխան եկեղեցւոյն և պ. Յովհաննէսն Տէր Յովսէփեան Առիւծեանց, իսկ անձնափոխանորդ վերջնոյս՝ իշխան Սարգիսն Միքայէլեան Արղութեանց:

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 6 Յունիսի ընդ համարաւ 225, որով հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական—ծխական երկդասեան օրիորդական և միդասեան տղայոց ուսումնարանաց Հայոց Աստրախանի յարգելի երեցփոխանք Ս. Աստուածածին և Ս. Պօղոս և Պետրոս եկեղեցեաց քաղաքին և պատուելիք՝ Կարապետն Թօփալեանց և Յովհաննէսն Սողոմոնեանց. իսկ անձնափոխանորդս վերջնոցս՝ յարգելիքն՝ բժիշկ Եղիայն Աֆդանդիլեանց և Յովակիմն Փարիմուզեանց:

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 8 Յունիսի ընդ համարաւ 232, որով պատուիրի Գեր. Անդամոյ Սինոդի Ս. Սարգիս եպիսկոպոսի Տէր Դասպարեանց վերածել ի կարգ սարկաւագութեան զսանուս Հոգևոր ճեմարանի Մայր Աթոռոյս՝ զՍտեփաննոսն Եղիազարեան Ղազանֆարցի, զՍողոմն Սողոմոնեան Քնօթայեցի, զԼևոնն Գեանջեցեան Շուշեցի և զՅուսիկն Զոհրաբեանց մեծ Սալայեցի:

—

Շրջաբերական Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 10 Յունիսի, որով ընդ ձեռն Թեմ. Առաջնորդաց տուեալ լինին վարչու-

թեանց եկեղեցական–ծխական ուսումնարանաց Հայոց ցուցակը ուսուցչաց և պաշտոնէից և տարեկան թոշակաց նոցին, աւանդելի առարկայից և քանակութեան շաբաթական դասուց նոցին «կոպար առաջին և կոպար երկրորդ» անուանեալք հանդերձ այլևայլ հրահանգութեամբք:

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 28 Յունիսի ընդ համարաւ 262, որով հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական—ծխական միդասեան Ս. Մարիամեան օրիորդական ուսումնարանի Նորաշէնի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Հայոց Տփխիսոյ բարեկրօն Գաբրիէլ քահանայն Զիվանեանց, յարգելի երէցփոխան եկեղեցւոյն և պ. Միքայէլն Թամամշեանց, իսկ անձնափոխանորդ վերջնոյս՝ պ. Աղէքսանդր Յովսէփեան Քիշմիշեանց:

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի Նոյն Թիւ և ի Նոյն համար, որով հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական—ծխական երկդասեան երկսեռ ուսումնարանաց Հայոց Թելաւ քաղաքի՝ բարեկրօն Գէորգ աւագ քահանայն Տէր Սարգսեանց, երեցփոխանն եկեղեցւոյ տեղւոյն և պատուելիք՝ Յովհաննէսն Բաղդասարեան Բաղդոյեանց և Միքայէլն Գէորգեան Թադէոսեանց, իսկ անձնափոխանորդս վերջնոցս՝ յարգելիք՝ Գասպարն Յովհաննիսեան Մղդեսեանց և Յովսէփն Ստեփանեան Ստեփանեանց:

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 28 Յունիսի ընդ համարաւ 264, որով հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան թեմական դպրոցի Հայոց Նոր—Նախիջևանի և Բեսսարաբիոյ յարգելիք՝ Իսահակն Մանուկեան Ալաճալեանց, Սերովբէն Խաչատրեան Յարութիւնեանց, Մինասն Եղիսեան Պալապանեանց, Գրիգորն Խաչերէյսեան Զալիուշեանց, Սարգիսն Կարապետեան Խանճեանց և Դաւիթն Գէորգեան Խոճայեանց, իսկ ի պաշտօն անձնափոխանորդութեան նոցին պատուելիք՝ Սերովբէն Յարութիւնեան Ադէմեանց, Մատթէոսն Կարապետեան Հայրապետեանց, Սրապիոնն Աստուածատրեան Աս-

տուածատրեանց, Յովհաննէսն Դրիգորեան Շլթեանց, Մինասն Ա-լէքսանեան Խալիպեանց և Բաղդասարն Միքայէլեան Տրապիզոնցեանց:

ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ.

6 Յուլիսի. Ըստ առաջարկութեան Առաջնորդին Ատրպատականի լուծուած է համաձայն Դաւրիժեցի Եսայի Միրզայեանցի և նորա կնոջ Աննա Մնացականեանցի պսակը: Եսայի Միրզայեանցին տրուում է իրաւունք նորից ամուսնանալու, իսկ Աննա Մնացականեանցը, որ ապօրինի և մեղանչական կենակցութեամբ ապրում է իւր հարազատ հօրեղբօր Օհան Բարսեղեան Մելիք—Աբրահամեանց Հին—Նախիջևանցու հետ և. որից ունեցել է արդէն զաւակ, կորցնում է վերստին ամուսնանալու իրաւունքը և ենթարկուում եկեղեցական բանադրանաց: Մելիք—Աբրահամեանցը ենթարկուում է քրէական պատաքննութեան ըստ 1011 յօդուածոյ:

---

16 Յուլիս. Արձակուում է Ապարանու գործակալութեան պաշտօնից, տեղի Հայ ընդհանուր ժողովրդեան բողոքի համաձայն, Ստեփաննոս քահանայ Տէր Խաչատրեանը, ենթարկուելով իւր ապօրինի և անհարազատ գործողութեանց համար պատասխանատուութեան: Նորա փոխանակ նշանակուում է գործակալ Մուղնու Ս. Գէորգ վանքի վանահայր բարեշնորհ Ղուկաս աբեղան, պահպանելով հանգերձ վանահայրութեան պաշտօնը:

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.